ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

ՀԱՅ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ 1500 ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400-ԱՄԵԱԿԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Արգին, 8 օգոստոսի

Վերջապէս ամսիս 4-ին տօնեց մեզ մօտ հայոց տառերի գիւտի և տպագրութեան համազգային կրկնակի մեծ տօնը։ Հանդէսը կատարեց բացօդեայ։ Յոբելեանական յանձնախումբը պատրաստել էր գորգերով և կանաչ ճիւղերով զարդարուած ամբիոն, որի գլխին դրուած էին ս. Սահակի և ս. Մեսրոպի պատկերները՝ նոյնպէս զարդարուած կանաչներով։

Հանդէսը բաց արաւ յանձնախմբի նախագահ հայր Գրիգոր ք. Եսայեան մի ճառով, որից յետոյ ամբիոն բարձրացան օրւայ բանախօսները։ Բանախօսեցին աւ. ուսուցիչ պ. Պօղ. Մարգարեան և ուսանողներ Գ. Ագնաւուրեան և Ա. Թորոսեան։

Գ. Ագնաւուրեանը խօսեց լեզուների ծագման մասին։ Պ. Մարգարեանը առաւ հայոց տառերի գիւտի և տպագրութեան պատմութիւնը, սկսած կենդանագրերի գործածութեան շրջանից մինչև հայոց գրականութեան ծաղկիլը։ Ապա պ. Թորոսեան նախ ռուսերէն լեզուով համառօտ կերպով ծանօթացրեց օրւայ տօնի հետ ներկայ եղող օտարներին, պատմելով տառերի գիւտի, տպագրութեան և հայոց հին և նոր գրականութեան մասին։ Հանդէսին ներկայ էր և Պետ. Դումայի անդամ պ. Չխենկելին։ Այնուհետև պ. Թորոսեանը հայերէն բաւական ընդարձակ խօսեց հայոց հին և նոր գրականութեան զարգացման մասին, բերելով ցիտատներ սկսած Աբովեանից մինչև նորագոյն գրողների մտքի ստեղծագործութիւնները։ Բոլոր բանախօսներն էլ արժանացան բուռն ծափահարութիւնների։ Հանդէսին նախօրօք հրաւիրուած էր և հայ-կաթոլիկների դեկան հայր Դիլլուկեան, բայց չէր եկել։ Ներկայ էր միայն յանձնախմբի անդամ հայր Գ. Գապոյեան, որը ոչինչ էլ չխօսեց։

Այստեղ չենք կարող լռել Արգինի երկու համայնքի ցոյց տուած անտարբեր վերաբերմունքի դէմ. չնայած, որ յանձնաժողովը նոյն օրը մեծ թւով տպագրուած ազդ ցրեց հասարակութեան մէջ, եկեղեցիներումն էլ քահանաները քարոզ խօսեցին պատուիրելով գնալ հանդէսին, սակայն մի քանի հոգի միայն եկել էին. վաճառական աղաներից էլ միայն մէկ հոգի։ Պակաս չխանգարեց լուսաւորչական համայնքի մէջ եղած հարսանիքը հանդէսի ժամանակ, որի պատճառով քիչ ժողովուրդ եկաւ։ Ներկայ էր երիտասարդութեան մեծամասնութիւնը։

Այստեղ ստիպուած ենք խոստովանել, որ արգինցիներին, աւա՜ղ, աւելի հետաքրքրում են ըմբշամարտները, որոնք երբ երևան են գալիս շրջակայ գիւղերից, ամեն մի խանութպան իր արհեստն ու առևտուրը ձեռքից թողնում է և շտապում «փահլեան» տեսնելու. ոմանք շտապելուց խանութներն անգամ մոռանում են փակել։ Այդ օրը շուկան բոլորովին ամայանում է, ժամերով ոտքի վրայ կանգնած սպասում են, որպէսզի փահլեանների գօտեմարտելը տեսնեն. յետոյ մի ամբողջ շաբաթ արդէն խօսակցութեան առարկան փահլեաններն են։ Մինչդեռ մի այսպիսի մեծ տօն մեր արիւնաշաղախ տաճկահայ եղբայրների աչքերից անգամ աննկատելի չանցաւ։ Ցաւել պէտք է արգինցիների այս աստիճան յետամնացութեան վրայ։

Յոբելեանները յաւերժացնելու համար Հրատարակչական ընկերութեան տեղիս ճիւղի վարչութիւնը որոշած էր սարքել մի երեկոյթ, ստացուած արդիւնքով հարստացնելու համար քաղաքային գրադարան-ընթերցարանի հայկական բաժինը. այդպէս որոշեց և անցած յուլիս 24-ին ինտելիգենցիայի հետ կայացրած խորհրդակցական ժողովում։ Երեկոյթը տեղի ունեցաւ ամսիս 6-ին լուսաւորչականների նորակառոյց դպրոցի դահլիճում։ Խաղացին ռուսերէն մի վոդէվիլ և հայերէն «Ծիպծիպանա» անունով մի պիէս տեղական բարբառով, որի նիւթը արգինցիների անչափահաս աղջիկ նշանելու սովորութիւնից է վերցրած։ Տեղի ունեցաւ և կաբարէ։ Մխիթարեանների վանքում ուսանող Արգինցի Յարութիւն Վերապատուելեան մի գեղեցիկ բանախօսութիւն կարդաց յոբելեանների առթիւ, վերջում յորդոր կարդալով Արգինի երկսեռ երիտասարդութեանը դաստիարակել հայ հոգով։ Նրա ճառը ընդունուեց ցնծագին ծափահարութիւններով։ Եղան և Եւրոպական պարեր։ Հասարակութիւնը գիշերւայ ժամի 2-ին գոհ սրտով ցրւեց տները։

Թէ հանդէսին և թէ երեկոյթին նուագում էր տեղիս քաղաքային դպրոցի գիտարիստ և մանդոլինիստ աշակերտների խումբը պ. Կլիմակովի ղեկավարութեամբ։ Երեկոյթին եկել էին դարձեալ երիտասարդութիւնը և ամառանոցաւորները, բայց այս անգամ աւելի մեծ թւով։ Բոլոր տոմսակները գրեթէ վաճառուեցան։ Ոչ մի վաճառական արժան չէր համարել տոմսակ վերցնել և գալ երեկոյթին։ Մուտք կը լինի մօտաւորապէս 150 ռ.։

Ինչպէս լսում ենք, տեղիս լուսաւորչական համայնքի դպրոցական վարչութիւնը պատրաստութիւններ է տեսնում տօնելու ներկայ Համազգային

տօնը Թիֆլիսի Առաջնորդարանում կազմուած յանձնաժողովի նշանակած օրը. այդ ժամանակ էլ կատարելու է ժողովարարութիւն դպրոցական ֆոնտի օգտին։

Հ.—եան